## Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 26 | Հունիս | 2019 թ. | Ա | 6531018983 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | |
| 26 | Հունիս | 2019 թ. | | |

Ճշգրտվող հաշվի

| Սերիա | Համար |
|---|---|
| | |

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

### Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 0 3 4 4 8 |
| [9] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 3 4 4 8 / 1 |
| [11] Բանկային տվյալները | Հայէկոնոմբանկ ՓԲԸ N 11500166513800 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

### Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | 19151519 դատահոգեբանական փորձաքննություն | հատ | 1 | 32833.33 | | 32833.33 | 20 | 6566.67 | 39400 |
| Ընդամենը | | | | | | 32833.33 | X | 6566.67 | 39400 |

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

26/06/2019 14:45:31

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

28 փետրվարի, 2019 թ. քաղ. Վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Տ.Թադևոսյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 19151519 քրեական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի հունվարի 28-ին՝ ժամը 14:00-ից մինչև ժամը 15:00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Տարոն 2 թաղամասի Վերածննդի փողոցում, «Վոլկսվագեն Գոլֆ» մակնիշի 31 SS 105 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի մեջ և ավտոմեքենայից դուրս Էդուարդ Սիմոնյանը ձեռքով հարվածներ է հասցրել Տիգրան Պետրոսյանի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը դիտավորությամբ պատճառելով ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Դեպքի առթիվ 2019 թվականի փետրվարի 04-ին ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 19151519 քրեական գործը, ըստ քննչական ենթակայության ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Էդուարդ Սիմոնյանը 2019 թվականի հունվարի 28-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Տարոն 2 ՔՇՀ 4 31 հասցեում գտնվող շենքի մոտ ընկերոջ՝ Միքայել Մկրտչյանի «Վոլկսվագեն Գոլֆ» մակնիշի 31 SS 105 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում դստեր՝ Շողիկ Սիմոնյանի ամուսնու՝ Տիգրան Պետրոսյանի կողմից իրեն և դստերը հայհոյելու, վերջինիս մազերը քաշելու պատճառով վիճաբանել, ապա ավտոմեքենայում և ավտոմեքենայից դուրս բռունցքներով մի քանի անգամ դիտավորությամբ հարվածել է Տիգրան Պետրոսյանի դեմքին, գլխին և նրա առողջությանը դիտավորությամբ պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս՝ դեմքի շրջանների արյունազեղում ու քերծվածքներ, գանգի հիմի առաջային գանգափոսի /մաղոսկրի/ կոտրվածք, գլխուղեղի թեթև աստիճանի սալջարդ՝ առանց ուղեղաբնային երևույթների, աջից հայմորյան ծոցի առաջային պատի ներհրած կոտրվածք, աջ ակնագնդի սալջարդ /արյունազեղում/:

2019 թվականի փետրվարի 26-ին Էդուարդ Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Մեղադրյալ Էդուարդ Սիմոնյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Տիգրան Պետրոսյանի կողմից իրենց հայհոյելու և դստեր մազերը քաշելուց հետո կորցրել է ինքնատիրապետումը, «արյունը խփել է գլխին», որի պատճառով էլ հարվածել է նրան:

Նկատի ունենալով, որ քրեական գործով նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզաբանելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-245 և 249 հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Սույն քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի փորձագետներին:
2.Փորձաքննության ներկայացնել սույն որոշումը, մեղադրյալ Էդուարդ Սիմոնյանը և քրեական գործի նյութերը կներկայացվեն փորձաքննության կատարման օրը:
3.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը:
ա.Մեղադրյալ Էդուարդ Սիմոնյանը գտնվել է արդյոք ֆիզիոլոգիական աֆեկտի/արագ և բուռն ընթացող պայթուցիկ բնույթի, համեմատաբար կարճատև հուզական հակազդում է՝ ռեակցիա, որն ուղեկցվում է հոգեկան գործունեության կտրուկ փոփոխություններով/ վիճակում իրեն մեղսագրվող արարքը կատարելիս, թե ոչ:
բ.Իրեն մեղսագրվող արարքը կատարելիս մեղադրյալ Էդուարդ Սիմոնյանը գտնվել է այնպիսի հուզական վիճակում/հոգեկան լարվածություն, ֆրուստրացիա, շփոթվածություն, սթրես և այլն/, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա, թե ոչ:
Փորձագետներին խնդրել պատասխանել այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:
4.Փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ [signature] Տ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ